Social Security

Հաշմանդամության Նպաստներ

www.socialsecurity.gov

Սոցիալական Ապահովության Հետ Կամ Հաստատել

Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- Դիմել նպաստների
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցէն
- Ստանալ կարեւոր տեղեկություններ՝ ինչպէս ձեր *Սոցիալական Ապահովության Հաշուեցոյցը* (*Social Security Statement*) կամ փոխարինել ձեր Medicare քարտը, իսկ
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները

Այս ծառայությունների մի մասը միայն Անգլերէն լեզվով են: Հայերէն հրատարակությունները տեսնելու համար այցելեցէք մեր Բազմալեզուական Կեդրոնի էջը ***www.socialsecurity.gov/multilanguage*** եւ ընտրեցէք, Հայերէնն:

Զանգահարեք Մեր 1-800 Թվին

Մեր վեբ կայքը օգտագործելուց բացի դուք կարող եք անվճար զանգահարել՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մեր կողմից բոլոր հեռախոսազանգերը պահվում են գաղտնի: Մենք կարող ենք պատասխանել որոշակի հարցերի ժամը 7-ից մինչեւ 19-ը՝ երկուշաբթիից մինչեւ ուրբաթ: Մենք կարող ենք ապահովել թարգմանչի անվճար ծառայություններ՝ հեռախոսով կամ ձեր տեղական գրասենյակում: Մենք նաեւ տրամադրում ենք տեղեկատվություն տեղեկատվության ավտոմատացված շուրջօրյա հեռախոսային ծառայության միջոցով: (Օգտվելով մեր ավտոմատ պատասխանիչ համակարգից, դուք կարող եք հայտնել մեզ ձեր նոր հասցեն կամ խնդրել Medicare-ի փոխարինող քարտ:) Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն, ապա կարող եք զանգահարել մեր TTY հեռախոսահամարով՝ **1-800-325-0778**:

Մենք ուզում ենք նաեւ երաշխավորել, որպեսզի դուք ստանաք ճշգրիտ եւ քաղաքավարի սպասարկում: Այդ պատճառով որոշակի հեռախոսազանգեր հսկվում են Սոցիալական ապահովության երկրորդ ներկայացուցչի կողմից:

Մեջը ինչ է պարունակում

Հաշմանդամության Նպաստներ 4

Ո՞վ կարող է ստանալ Սոցիալական ապահովության նպաստներ 4

Ես ինչպե՞ս եմ դիմում հաշմանդամության նպաստների համար 7

Ես ե՞րբ պետք է դիմեմ եւ ի՞նչ տեղեկատվություն է ինձ անհրաժեշտ 8

Ո՞վ է որոշում իմ հաշմանդամ լինելը 9

Ի՞նչ է տեղի ունենում, երբ իմ դիմումը բավարարվում է 13

Ընտանեկան նպաստներ 14

Ինչպե՞ս են այլ վճարումները ազդում իմ նպաստների վրա 14

Դուք ի՞նչ տեղեկատվություն պետք է ներկայացնեք մեզ 15

Արդյո՞ք ես կարող եմ ստանալ Medicare 16

Աշխատանքի վերադառնալը 16

«Աշխատանքի տոմս» ծրագիրը 17

Հաշմանդամության Նպաստներ

Հաշմանդամությունը մի բան է, որի մասին մարդկանց մեծամասնությունը չի ուզում մտածել: Սակայն, ձեր հաշմանդամ դառնալու հնարավորությունները գուցե ավելի մեծ են, քան դուք կարծում եք: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 20 տարեկան աշխատողը ունի 10-ից 3 հնարավորություն մինչեւ կենսաթոշակի անցնելու տարիքի հասնելը հաշմանդամ դառնալու համար:

Սույն գրքույկում ներկայացված է Սոցիալական ապահովության նպաստների մասին հիմնական տեղեկատվությունը եւ նպատակ չունի պատասխանելու բոլոր հարցերին: Ձեր իրավիճակի մասին որոշակի տեղեկատվության վերաբերյալ դուք պետք է խոսեք Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ:

Մենք վճարում ենք հաշմանդամության նպաստներ երկու ծրագրերի միջոցով. Սոցիալական ապահովության հաշմանդամության ապահովագրության ծրագիրը եւ Լրացուցիչ սոցիալական եկամուտի (SSI) ծրագիրը: Սույն գրքույկը Սոցիալական ապահովության հաշմանդամության ծրագրի մասին է: Մեծահասակների համար SSI-ի հաշմանդամության ծրագրի մասին տեղեկատվության համար, տես *Լրացուցիչ սոցիալական եկամուտ (SSI)* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-11000-AM): Երեխաների համար հաշմանդամության ծրագրերի համար տեղեկացե՛ք *Նպաստներ հաշմանդամություններով երեխաների համար* հրապարակումից (Հրապարակում թիվ 05-10026-AM): Մեր հրապարակումները մատչելի են օնլայն ռեժիմով՝ ***www.socialsecurity.gov*** հասցեում:

Ո՞վ կարող է ստանալ Սոցիալական ապահովության նպաստներ

Սոցիալական ապահովությունը վճարում է նպաստներ այն մարդկանց, որոնք չեն կարող աշխատել, որովհետեւ ունեն առողջական վիճակ, որը ակնկալվում է, որ կտեւի առնվազն մեկ տարի կամ կհանգեցնի մահվան: Հաշմանդամության նման խիստ սահմանումը պահանջվում է դաշնային օրենքով: Չնայած որ որոշ ծրագրերով գումարներ են տրվում մասնակի

կամ կարճաժամկետ հաշմանդամությամբ մարդկանց, սակայն Սոցիալական ապահովությունը չի տալիս:

Հաշմանդամ աշխատողների ընտանիքի որոշ անդամներ նույնպես կարող են փող ստանալ Սոցիալական ապահովությունից: Դա բացատրվում է էջ 14-ում:

Ես ինչպե՞ս եմ բավարարում հաշմանդամության նպաստների հասույթի պահանջներին

Սովորաբար, հաշմանդամության նպաստ ստանալու համար դուք պետք է բավարարեք հասույթի երկու տարբեր չափանիշերին.

1. «Վերջին աշխատանք» չափանիշը, որը հիմնվում է հաշմանդամ դառնալու ձեր տարիքի վրա եւ
2. «Աշխատանքի տեւողության» չափանիշը՝ Սոցիալական ապահովության ներքո ձեր բավականաչափ աշխատելը ցույց տալու համար:

Որոշ կույր աշխատողներ պետք է բավարարեն միայն «աշխատանքի տեւողություն» չափանիշին:

Էջ 6-ի աղյուսակում ցույց են տրված, թե որքա՞ն աշխատանք է պահանջվում ձեր «աշխատանքի տեւողության» չափանիշով, ելնելով ձեր հաշմանդամությունը սկսելու պահին ձեր տարիքից: Այդ աղյուսակի կանոնները հիմնված են այն ***օրացուցային եռամսյակի*** վրա, որի ընթացքում լրացել է կամ լրանալու է ձեր որոշակի տարիքը:

Օրացուցային եռամսյակներն են.

Առաջին եռամսյակ. հունվարի 1-ից մինչեւ մարտի 31-ը

Երկրորդ եռամսյակ. ապրիլի 1-ից մինչեւ հունիսի 30-ը

Երրորդ եռամսյակ. հուլիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 30-ը

Չորրորդ եռամսյակ. հոկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը

«Վերջին աշխատանքի չափանիշի» համար պահանջվող աշխատանքի հետ կապված կանոնները	
Եթե դառնում եք հաշմանդամ...	***Ապա, որպես կանոն, ձեզ անհրաժեշտ է.***
Ձեր 24 տարեկանը լրանալու կամ դրան նախորդող եռամսյակում	1,5 տարվա աշխատանք եռամյա ժամանակամիջոցում, որը ավարտվում է ձեր հաշմանդամությունը սկսվելու եռամսյակում:
Ձեր 24 տարեկանը լրանալուց հետո եռամսյակում, բայց ձեր 31 տարեկանը լրանալու եռամսյակից առաջ	Աշխատանք ձեր 21 տարեկանը լրանալու եռամսյակից հետո մինչեւ ձեր հաշմանդամ դառնալու եռամսյակը ընկած ժամանակամիջոցի կեսի չափով ժամանակի ընթացքում: Օրինակ, եթե դուք հաշմանդամ եք դառնում 27 տարեկան լրանալու եռամսյակում, ապա ձեզ անհրաժեշտ է ունենալ երեք տարվա աշխատանք՝ ձեր հաշմանդամ դառնալու եռամսյակից առաջ ընկած վեց տարվա ժամանակամիջոցում:
Ձեր 31 տարեկանը լրանալու եռամսյակում կամ դրանից հետո	Աշխատանք հինգ տարվա ընթացքում՝ ձեր հաշմանդամությունը սկսվելու եռամսյակից առաջ ընկած 10-ամյա ժամանակամիջոցում:

Հետեւյալ աղյուսակում ցույց են տրված օրինակներ, թե որքա՞ն աշխատանք է պահանջվում, որպեսզի բավարարեք «աշխատանքի տեւողություն» չափանիշին, եթե դուք դառնում եք հաշմանդամ որոշակի առանձին տարիքներում: «Աշխատանքի տեւողություն» չափանիշի համար ձեր աշխատանքը պարտադիր չէ, որ ընկնի որոշակի կոնկրետ ժամանակամիջոցում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. *Սույն աղյուսակը չի ընդգրկում բոլոր իրավիճակները:*

«Աշխատանքի տեւողություն» չափանիշի համար պահանջվող աշխատանքի օրինակները	
Եթե դուք հաշմանդամ եք դառնում...	***Ապա, որպես կանոն, ձեզ անհրաժեշտ է.***
Մինչեւ 28 տարեկանը	1,5 տարվա աշխատանք
30 տարեկանում	2 տարի
34 տարեկանում	3 տարի
38 տարեկանում	4 տարի
42 տարեկանում	5 տարի
44 տարեկանում	5,5 տարի
46 տարեկանում	6 տարի
48 տարեկանում	6,5 տարի
50 տարեկանում	7 տարի
52 տարեկանում	7,5 տարի
54 տարեկանում	8 տարի
56 տարեկանում	8,5 տարի
58 տարեկանում	9 տարի
60 տարեկանում	9,5 տարի

Ես ինչպե՞ս եմ դիմում հաշմանդամության նպաստների համար

Դուք կարող եք դիմել հաշմանդամության նպաստների համար երկու ճանապարհով: Դուք կարող եք.

1. Դիմել օնլայն ռեժիմով՝ ***www.socialsecurity.gov*** հասցեում կամ
2. Զանգահարել **1-800-772-1213** մեր անվճար հեռախոսահամարով՝ Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակում հաշմանդամության հայտ ներկայացնելու նպատակով հանդիպում նշանակելու համար կամ հանդիպում նշանակելու որեւէ մեկի համար՝ ձեր դիմումի պատասխանը հեռախոսով ստանալու համար: Հաշմանդամության դիմումների հարցազրույցը տեւում է մոտ մեկ ժամ: Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն, ապա դուք կարող եք զանգահարել մեր TTY հեռախոսահամարով՝ **1-800-325-0778** աշխատանքային

օրերին ժ.7:00-ից մինչեւ 19:00-ն: Եթե դուք նշանակում եք հանդիպում, ապա ձեզ փոստով կուղարկվի Հաշմանդամություն սկսողի լրակազմ: Հաշմանդամության սկսողի լրակազմը կօգնի ձեզ նախապատրաստվելու հաշմանդամության դիմումի հարցազրույցին: Եթե դուք դիմում եք օնլայն ռեժիմով, ապա Հաշմանդամության սկսողի լրակազմը մատչելի է ***www.socialsecurity.gov/disability*** հասցեում:

Ես ե՞րբ պետք է դիմեմ եւ ի՞նչ տեղեկատվություն է ինձ անհրաժեշտ

Դուք հաշմանդամության համար պետք է դիմեք անմիջապես հաշմանդամ դառնալուց հետո: **Հաշմանդամության նպաստների դիմումի ընթացքը կարող է տեւել երկար ժամանակ (երեքից մինչեւ հինգ ամիս):** Մենք կկարողանանք մշակել ձեր տեղեկատվությունը ավելի արագ, եթե նպաստների համար դիմելու ժամանակ դուք մեզ տարամադրեք տեղեկատվություն (տես ներքեւում) եւ լրացնեք Հաշմանդամության հաշվետվությունը: Դուք կարող եք լրացնել Հաշմանդամության հաշվետվությունը օնլայն ռեժիմով ***www.socialsecurity.gov/disability/3368*** հասցեում: Դուք կարող եք նաեւ տպել Հաշմանդամության հաշվետվությունը, լրացնել այն եւ վերադարձնել Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակին: Մենք կարող նք մշակել ձեր դիմումը ավելի արագ, եթե դուք օգնեք մեզ ստանալու մեզ անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

Մեզ անհրաժեշտ տեղեկատվությունը ներ է առնում.

- Ձեր Սոցիալական ապահովության համարը.
- Ձեր ծննդյան կամ մկրտության վկայականը.
- Անունները, ազգանունները (անվանումները), հասցեները եւ հեռախոսամարները այն բժիշկների, պատրոնաժային բույժքույրերի եւ կլինիկաների, որոնք խնամել են ձեզ եւ ձեր այցելությունների ամսաթվերը.
- Ձեր կողմից ստացվող բոլոր դեղերի անվանումները եւ դեղաչափերը.

- Ձեր տրամադրության տակ արդեն իսկ եղած բժշկական տեղեկանքները ձեր բժիշկներից, թերապեւտներից, հիվանդանոցներից եւ պատրոնաժային բուժքույրերից.
- Լաբորատոր եւ անալիզների արդյունքները.
- Ամփոփոգիր, թե որտե՞ղ եք աշխատել եւ ի՞նչ տեսակի աշխատանք եք կատարել, ինչպես նաեւ
- Ձեր ամենավերջին W-2 ձեւի (Wage and Tax Statement—Աշխատավարձի եւ հարկային քաղվածք) օրինակը կամ, եթե ինքնազբաղ եք՝ ձեր դաշնային հարկային հայտարարագիրը անցյալ տարվա համար:

Բացի հաշմանդամության նպաստների դիմումի հիմնական տեղեկատվության, կան լրացման ենթակա այլ ձեւեր: Մի ձեւը տեղեկատվություն է հավաքագրում ձեր առողջական վիճակի մասին եւ, թե ինչպե՞ս է այն ազդում ձեր աշխատանքի վրա: Այլ ձեւերը թույլ են տալիս ձեզ բուժմամբ զբաղվող բժիշկներին, հիվանդանոցներին եւ առողջապահության ոլորտի այլ մասնագետներին մեզ ուղարկելու տեղեկատվություն ձեր առողջական վիճակի մասին:

Մի՛ հետաձգեք նպաստների համար դիմելու հարցը, եթե դուք չեք կարողանում արագ հավաքել այս ամբողջ տեղեկատվությունը: Մենք կօգնենք ձեզ այն հավաքելու գործում:

Ո՞վ է որոշում իմ հաշմանդամ լինելը

Մեր կողմից կուսումնասիրվի ձեր դիմումը, որպեսզի երաշխավորվի հաշմանդամության նպաստների որոշակի հիմնական պահանջների բավարումը: Մենք կճշտենք, թե արդյո՞ք դուք աշխատել եք բավարար տարիներ, որպեսզի համապատասխանեք պահանջներին: Մենք նաեւ գնահատելու ենք ներկայումս իրականացվող աշխատանքային գործունեությունը: Եթե դուք բավարարեք այս պահանջներին, ապա մենք կուղարկենք ձեր դիմումը ձեր նահանգի Հաշմանդամության որոշման ծառայությունների գրասենյակին:

Այդ նահանգային գործակալությունը մեր խնդրանքով ավարտի է բերում հաշմանդամության հետ կապված որոշումը: Նրանք կօգտագործեն ձեր բուժմամբ զբաղվող բժիշկներից եւ հիվանդանոցներից, կլինիկաներից կամ հաստատություններից

ստացված բժշկական վկայությունը եւ ամբողջ այլ տեղեկատվությունը: Նրանք կհարցնեն ձեր բժիշկներին, թե.

- Ինչպիսի՞նն է ձեր առողջական վիճակը.
- Ե՞րբ է սկսվել ձեր առողջական վիճակը.
- Ինչպե՞ս է ձեր առողջական վիճակը սահմանափակում ձեր գործունեությունը.
- Ի՞նչ են ցույց տվել բժշկական անալիզները. ինչպես նաեւ
- Ինչպիսի՞ բուժում եք դուք ստացել:

Նրանք նաեւ կխնդրեն բժիշկներից տեղեկատվություն աշխատանքի հետ կապված գործունեություն իրականացնելու ձեր ունակության վերաբերյալ, ինչպես օրինակ, քայլելը, նստելը, բարձրացնելը, հրահանգների կատարելը եւ հիշելը: Ձեր բժիշկներից չի խնդրվում որոշելու ձեր հաշմանդամ լինելը:

Նահանգային գործակալության անձնակազմին կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ տեղեկատվություն նախքան ձեր հաշմանդամ լինելու մասին որոշում կայացնելը: Եթե լրացուցիչ տեղեկատվությունը մատչելի չէ ձեր գործող բժշկական աղբյուրներից, ապա նահանգային գործակալությունը կարող է խնդրել ձեզ անցնելու հատուկ զննություն: Մենք նախընտրում ենք խնդրել ձեր բժիշկին, սակայն երբեմն զննությունը պետք է կատարվի ուրիշի կողմից: Սոցիալական ապահովությունը կհոգա զննության հետ կապված եւ առնչվող ճանապարհային որոշ ծախսերը:

Մենք ինչպե՞ս ենք որոշում կայացնում

Ձեր հաշմանդամ լինելը որոշելու համար մեր կողմից օգտագործվում է հինգ-աստիճանի գործընթաց:

1. Արդյո՞ք դուք աշխատում եք:

Եթե դուք աշխատում եք եւ ձեր հասույթի միջինը ամեն ամիս կազմում է որոշակի գումարից բարձր, ապա մենք որպես կանոն ձեզ հաշմանդամ չենք համարի: Գումարը փոփոխվում է ամեն տարի: Գործող թիվը իմանալու համար, տես տարեկան *Տեղեկությունների Նորություն* (Հրապարակում թիվ 05-10003-AM):

Եթե դուք չեք աշխատում կամ ձեր ամսական հասույթի միջինը հավասար է գործող գումարին կամ դրանից փոքր է, ապա նահանգի գործակալությունը այնուհետեւ նայում է ձեր առողջական վիճակին:

2. Արդյո՞ք ձեր առողջական վիճակը «ծանր է»:

Որպեսզի նահանգային գործակալությունը որոշի ձեր հաշմանդամ լինելը, ձեր առողջական վիճակը պետք է էապես սահմանափակի ձեր ունակությունը հիմնական աշխատանքային գործունեություն վարելու համար, ինչպես օրինակ քայլերը, նստելը եւ հիշելը՝ առնվազն մեկ տարվա ընթացքում: Եթե ձեր առողջական վիճակը այդքան ծանր չէ, ապա նահանգային գործակալությունը ձեզ հաշմանդամ չի ճանաչի: Եթե ձեր վիճակը այդքան ծանր է, ապա նահանգային գործակալությունը կանցնի երրորդ քայլին:

3. Արդյո՞ք ձեր առողջական վիճակը Վատթարացումների ցուցակում (List of Impairments) է:

Նահանգային գործակալությունը ունի Վատթարացումների ցուցակ, որում նկարագրված են այն առողջական վիճակները, որոնք համարվում են այնքան ծանր, որ ինքնաբերաբար նշանակում են, որ դուք օրենքով սահմանված կարգով հաշմանդամ եք: Եթե ձեր վիճակը (կամ առողջական վիճակների համակցությունը) այդ ցուցակում չէ, ապա նահանգային գործակալությունը դիտարկում է, թե. արդյո՞ք, ձեր վիճակը նույնքան ծանր է, ինչ ցուցակում եղած վիճակը: Եթե ձեր առողջական վիճակի ծանրությունը հասնում կամ հավասար է ցուցակագրված վատթարացմանը, ապա նահանգային գործակալությունը կորոշի, որ դուք հաշմանդամ եք: Եթե ոչ, ապա նահանգային գործակալությունը կանցնի չորրորդ քայլին:

4. Արդյո՞ք դուք կարող եք կատարել նախկինում կատարած աշխատանքը:

Այս փուլում նահանգային գործակալությունը որոշում է, թե, արդյո՞ք, ձեր առողջական վիճակը ձեզ խանգառում է կատարելու ձեր կողմից նախկինում կատարած աշխատանքը: Եթե ոչ, ապա նահանգային գործակալությունը կորոշի, որ դուք հաշմանդամ չեք: Եթե այո, ապա նահանգային գործակալությունը կանցնի հինգերորդ քայլին:

5. Արդյո՞ք դուք կարող եք կատարել որեւէ այլ աշխատանք:

Եթե դուք չեք կարող կատարել անցյալում կատարած աշխատանքը, ապա նահանգային գործակալությունը կդիտարկի, թե արդյո՞ք դուք կկարողանայիք կատարել որեւէ այլ աշխատանք: Այն գնահատում է ձեր առողջական վիճակը, ձեր

տարիքը, կրթությունը, անցյալ աշխատանքային փորձը եւ ձեր ունեցած հմտությունները, որոնք կարող են օգտագործվել այլ աշխատանք կատարելու համար: Եթե դուք չեք կարող կատարել այլ աշխատանք, ապա նահանգային գործակալությունը կորոշի, որ դուք հաշմանդամ եք: Եթե դուք կարող եք կատարել այլ աշխատանք, ապա նահանգային գործակալությունը կորոշի, որ դուք հաշմանդամ չեք:

Հատուկ կանոններ կույրերի համար

Գոյություն ունի մի շարք այլ հատուկ պայմաններ այն մարդկանց համար, որոնք կույր են: Լրացուցիչ տեղեկատվության համար, խնդրե՛ք *If You Are Blind Or Have Low Vision—How We Can Help* հրապարակումը (*Եթե դուք կույր եք կամ ունեք վատ տեսողություն՝ ինչե՞ս մենք կարող ենք օգնել*, Հրապարակում թիվ 05-10052):

Մենք կտեղեկացնենք ձեզ մեր որոշման մասին

Նահանգային գործակալության կողմից ձեր գործի վերաբերյալ որոշում կայացնելիս, մենք ձեզ նամակ կուղարկենք: Եթե ձեր դիմումը բավարարվում է, ապա նամակում նշված կլինի ձեր նպաստի գումարը եւ ձեր վճարումների սկսվելու ժամկետը: Եթե ձեր դիմումը չի բավարարվում, ապա նամակում կնշվի, թե ինչո՞ւ, բացատրելով, թե ինչպե՞ս բողոքարկել որոշումը՝ դրա հետ անհամաձայն լինելու դեպքում:

Բողոքարկելու իրավունքը

Եթե դուք համաձայն չեք ձեր դիմումի վերաբերյալ կայացած որոշման հետ, ապա դուք կարող եք բողոքարկել այն: Սոցիալական պահովությունից մատչելի *Բողոքարկման Ընթացքը* հրապարակման (Հրապարակում թիվ 05-10041-AM) մեջ նրակագրված են այն քայլերը, որոնք դուք կարող եք ձեռնարկել:

Դուք իրավունք ունեք ներկայացված լինելու փաստաբանի կամ ձեր ընտրությամբ որեւէ որակավորված անձի կողմից: Լրացուցիչ տեղեկատվություն պարունակվում է *Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը* հրապարակման (Հրապարակում թիվ 05-10075-AM) մեջ, որը նույնպես մատչելի է Սոցիալական ապահովությունում:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ իմ դիմումը բավարարվում է

Ե՞րբ են սկսվում իմ նպաստները

Եթե ձեր դիմումը բավարարվում է, ապա Սոցիալական ապահովության առաջին նպաստները վճարվելու են ձեր հաշմանդամությունը սկսելու պահից հետո առաջին լրիվ վեց ամսից հետո:

Օրինակ. Եթե գործակալության կողմից որոշվում է, որ ձեր հաշմանդամությունը սկսվել է հունվարի 15-ին, ապա հաշմանդամության առաջին նպաստը կվճարվի հուլիս ամսվա համար: Սոցիալական ապահովության նպաստները վճարում են դրանք հասանելի լինելու ամսին հաջորդող ամսում, ուստի, դուք ձեր նպաստը կստանաք օգոստոսին:

Դուք նաեւ կստանաք *What You Need To Know When You Get Disability Benefits* հրապարակման (*Դուք ի՞նչ պետք է իմանաք հաշմանդանդամության նպաստ ստանալիս*, Հրապարակում թիվ 05-10153) օրինակը, որը ձեզ կարեւոր տեղեկատվություն է տալիս ձեր նպաստների մասին, ասելով, թե ի՞նչ փոփոխությունների մասին դուք պետք է հայտնեք մեզ:

Որքա՞ն է կազմելու իմ նպաստը

Ձեր ամսական հաշմանդամության նպաստը հիմնված է ձեր կյանքի տեւողության ընթացքում միջին հասույթի վրա: *Սոցիալական ապահովության քաղվածքը*, որը դուք ստանում եք ամեն տարի, արտահայտում է ձեր կյանքի տեւողության ընթացքում հասույթը եւ տալիս է ձեր հաշմանդամության նպաստի գնահատականը: Այն նաեւ ընդգրկում է տարիքային կամ կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստները, որոնք դուք կամ ձեր ընտանիքի անդամները կարող են իրավասու լինել ապագայում ստանալու համար: Եթե դուք չունեք ձեր *Սոցիալական ապահովության քաղվածքը* եւ կցանկանայիք ստանալ ձեր հաշմանդամության նպաստի գնահատումը, ապա կարող եք խնդրել այն մեր վեբ կայքից՝ ***www.socialsecurity.gov*** հասցեում կամ զանգահարել մեր անվճար հեռախոսահամարով՝ **1-800-772-1213**:

Ընտանեկան նպաստներ

Ձեր ընտանիքի որոշ անդամներ կարող են համապատասխանել ձեր աշխատանքի հիման վրա նպաստների պահանջներին: Դրանց թվում են.

- Ձեր կինը (ամուսինը), եթե նա 62 տարեկան է կամ ավելի մեծ է.
- Ձեր կինը (ամուսինը) ցանկացած տարիքում, եթե նա խնամում է ձեր երեխային, որը 16 տարեկանից փոքր է կամ հաշմանդամ է.
- Ձեր ամուրի երեխան, ներառյալ որդեգրված երեխան կամ որոշ դեպքերում խորդ երեխան կամ թոռը: Երեխան պետք է լինի 18 տարեկանից ցածր կամ 19 տարեկանից ցածր՝ եթե հաճախում է ցերեկային ուսուցման տարրական կամ միջնակարգ դպրոց, ինչպես նաեւ
- Ձեր ամուրի երեխան՝ 18 տարեկան կամ ավելի մեծ, եթե նա ունի հաշմանդամություն, որը սկսվել է 22 տարեկանից առաջ: (Երեխայի հաշմանդամությունը նույնպես համապատասխանում է մեծահասակների սահմանմանը):

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Որոշ դեպքերում ամուսնալուծված կինը (ամուսինը) կարող է բավարարել ձեր հասույթի հիման վրա նպաստների պահանջներին, եթե նա ամուսնացած է եղել ձեզ հետ առնվազն 10 տարվա ընթացքում, ներկայում ամուսնացած չէ եւ առնվազն 62 տարեկան է: Ամուսնալուծված կնոջը (ամուսնուն) վճարված գումարը չի կրճատում ձեր նպաստը կամ ձեր ներկայիս կնոջը (ամուսնուն) կամ երեխաներին հասանելիք նպաստները:

Ինչպե՞ս են այլ վճարումները ազդում իմ նպաստների վրա

Եթե դուք ստանում եք այլ նպաստներ, ապա դա կարող է ազդել ձեր կողմից ստացվող հաշմանդամության նպաստների չափի վրա: Լրացուցիչ տեղեկատվության համար դուք պետք է ծանոթանաք հետեւյալի հետ.

- *How Workers' Compensation And Other Disability Payments May Affect Your Benefits* հրապարակման (*Ինչպե՞ս աշխատողների փոխհատուցումը եւ հաշմանդամության այլ նպաստները կարող են ազդել հաշմանդամության նպաստների վրա*, Հրապարակում թիվ 05-10018) հետ.
- *Windfall Elimination Provision* հրապարակման (*Չակնկալված եկամուտի բացառման ապահովում*, Հրապարակում թիվ 05-10045) հետ, ինչպես նաեւ
- *Government Pension Offset* հրապարակման (*Կառավարական կենսաթոշակի փոխհատուցում*, Հրապարակում թիվ 05-10007) հետ:

Դուք կարող եք ստանալ այս հրապարակումները մեր վեբ կայքից կամ կարող եք դիմել մեզ՝ դրանք ստանալու համար:

Դուք ի՞նչ տեղեկատվություն պետք է ներկայացնեք մեզ

Եթե դուք ունեք ձեր կալանքի չկատարված օրդեր

Դուք մեզ պետք է հայտնեք, եթե դուք ունեք կալանքի չկատարված օրդեր հետեւյալի համար.

- Հանցագործություն, որը ոճրագործություն է այն նահանգի օրենքներով, որտեղ ապրում եք. կամ
- Հանցագործություն, որը պատժելի է մահվամբ կամ մեկ տարուց ավելի ազատազրկմամբ այն նահագնրում որտեղ հանցագործությունները չեն որակվում որպես ոճրագործություններ.

Դուք չեք կարող ստանալ Սոցիալական ապահովության նպաստներ այն ամիսների համար, որոնցում եղել է կալանքի չկատարված օրդեր մի հանցագործության համար, որը ոճրագործություն է (կամ հանձագործություն, որը պատժելի է մահվամբ կամ մեկ տարուց ավելի ազատազրկմամբ):

Եթե դուք դատապարտված եք քրեական իրավախախտման համար

Եթե դուք ստանում եք Սոցիալական ապահովության նպաստներ եւ մեղադրվում եք հանցագործության մեջ, ապա Սոցիալական ապահովությանը պետք է անմիջապես

տեղեկացնել: Սովորաբար, նպաստները չեն վճարվում անձի կալանավորման ամիսների համար, սակայն ընտանիքի բոլոր անդամները, ովքեր իրավասու են, կարող են շարունակել ստանալ նպաստները:

Նպաստները սովորաբար չեն վճարվում այն անձանց, ովքեր կատարել են հանցագործություն եւ գտնվում են կալանավայրում՝ դատարանի վճռով եւ հանրային հաշվին: Սա կիրառելի է, եթե անձը ճանաչվել է.

- Անմեղ անմեղսագիտակցության պատճառով կամ նմանատիպ գործոններով (ինչպիսիք են հոգեկան հիվանդությունները, հոգեկան թերությունը կամ հոգեկան անմեղսունակությունը). կամ
- Անիրավազոր դատավարությանը հանդես գալու համար:

Եթե դուք խախտում եք պայմանական-վաղաժամկետ ազատման կամ փորձաշրջանի պայմանը

Դուք պետք է հայտնեք մեզ, եթե դուք խախտում եք դաշնային կամ նահանգային օրենքով սահմանված պայմանական-վաղաժամկետ կամ փորձաշրջանի պայմանը: Դուք չեք կարող նպաստներ ստանալ այն ամսվա համար, որում դուք խախտում եք վաղաժամկետ-պայմանական ազատման կամ փորձաշրջանի պայմանը:

Արդյո՞ք ես կարող եմ ստանալ Medicare

Երկու տարվա ընթացքում հաշմանդամության նպաստներ ստանալուց հետո դուք ինքնաբերաբար կստանաք Medicare-ի ծածկույթը:

Աշխատանքի վերադառնալը

Հաշմանդամության նպաստների ստացումը սկսելուց հետո դուք կրկին կարող եք փորձել աշխատելը: Ձեր աշխատելու ունակությունը ստուգելու ընթացքում գոյություն ունեն հատուկ կանոններ, որոնք օգնում են ձեզ պահպանելու ձեր կանխիկ նպաստները եւ Medicare-ը: Մեր կողմից այդ կանոնները

կոչվում են «աշխատանքի խթաններ» կամ «զբաղվածության աջակցության» ծրագրեր:

Ձեր աշխատանքի վերադառնալու մասին լրացուցիչ տեղեկատվության համար խնդրե՛ք *Հաշմանդամության ընթացքում աշխատելը՝ ինչպես մենք կարող ենք օ·նել* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-10095-AM): Զբաղվածության հետ կապված մեր բոլոր աջակցությունները կարող են գտնվել մեր *Red Book, A Summary Guide to Employment Support for Individuals with Disabilities Under the Social Security Disability Insurance and Supplemental Security Income Programs* հրապարակման (*Կարմիր գիրք՝ Սոցիալական ապահովության հաշմանդամության ապահովագրությամբ եւ Լրացուցիչ սոցիալական եկամուտի ծրագրերով անհատների համար զբաղվածության աջակցության ամփոփ ուղեցույց*, (Հրապարակում թիվ 64-030) մեջ: Այցելե՛ք նաեւ մեր վեբ կայքը՝ ***www.socialsecurity.gov/work*** հասցեում:

«Աշխատանքի տոմս» ծրագիրը

Սույն ծրագրով Սոցիալական ապահովության եւ Լրացուցիչ սոցիալական եկամուտի հաշմանդամության նպաստառուները կարող են օգնություն ստանալ մեր ուսուցման եւ այլ ծառայությունների տեսքով, որը նրանց անհրաժեշտ է աշխատանքի գնալու համար՝ **իրենց համար անվճար** հիմունքներով: Նպաստառուներից մեծամասնությունը կստանա «տոմս», որը նրանք կարող են ներկայացնել իրենց ընտրությամբ իրենց անհրաժեշտ ծառայությունների մատուցողին: Այս ծրագրի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար խնդրե՛ք *Your Ticket To Work* հրապարակման (*Աշխատելու ձեր տոմսը*, Հրապարակում թիվ 05-10061) օրինակը:

www.socialsecurity.gov

Social Security Administration
SSA Publication No. 05-10029-AM
Disability Benefits (Armenian)
May 2008